Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 22-06-2023 թ. որոշմամբ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԲՈՒԶԱՆԴ ՓՈՂ. 3 ՏԱՐԱԾՔ 37 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.1031198 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2018-08-06 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 02680874 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)43222109 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | finance@armsymphony.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Արմեն Թավադյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 4 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Նվիրաբերություններ կանոնադրական նպատակների համար | 154,474,774 |
| | Հաշվարկային հաշվում առկա մնացորդի նկատմամբ տոկոսի հաշվեգրում | 976,969 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |

| | | |
|---|---|---|
| | Նվիրատվություններ կանոնադրական նպատակների համար | 2,543,915 |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | Երաժշտական գործիքներ | 260,000 |
| | Երաժշտական գործիքի պարագաներ | 500,000 |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Աջակցություն կանոնադրական գործունեության շրջանակներում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտներին | 72,627,079 | |
| Աջակցություն կանոնադրական գործունեության շրջանակներում մշակույթի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց | 6,833,521 | |
| Նվիրաբերություն մշակութային կազմակերպություններին կանոնադրական նպատակների համար | 16,824,795 | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 132,029,402 | |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 96,285,395 | |

**Նշումներ՝**

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 23 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

# «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամ»

## Ֆինանսական հաշվետվություններ

*2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*
*Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

# Բովանդակություն

## Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ..... 1
Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ..... 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն ..... 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ..... 4

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն ..... 5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները ..... 5
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը ..... 5
4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ ..... 10
5. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ ..... 12
6. Հիմնական միջոցներ ..... 13
7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ..... 13
8. Սահմանափակ օգտագործման ֆոնդեր ..... 143
9. Կրեդիտորական պարտքեր և պահուստներ ..... 14
10. Եկամուտներ ստացված նվիրաբերություններից ..... 14
11. Տրված նվիրաբերություններ ..... 14
12. Վարչական և այլ ծախսեր ..... 15
13. Շահութահարկի գծով ծախս ..... 15
14. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ ..... 16
15. Գործարքներ կապակցված կողմերի հետ ..... 16
16. Ֆինանսական գործիքների իրական արժեք ..... 17
17. Ռիսկի կառավարում ..... 18

Ernst & Young CJSC
2, Vazgen Sargsyan St.,
Kamar Business Center,
Yerevan, 0010, Armenia
Tel: +374 60 50 7777
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամի»
Հոգաբարձուների խորհրդին

***Կարծիք***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամի» (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքները, համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

***Կարծիքի հիմքեր***

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից ՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Ղեկավարության և Հոգաբարձուների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածանք: Մենք նաև՝

Digitally signed by ASATRYAN ASTGHIK 79760071
Date: 2023.08.02 17:33:03 AMT

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի գործունեության անընդհատության դադարեցմանը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Հոգաբարձուների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն,
Աուդիտի բաժնի գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

31 հուլիսի, 2023թ.

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

## 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծան. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 6 | 3,472 | 46,602 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 13 | – | 2,657 |
| | | **3,472** | **49,259** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7 | 40,100 | 14,134 |
| Կանխավճարներ | | 833 | 299 |
| Պաշարներ | | 1,546 | 710 |
| | | **42,479** | **15,143** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **45,951** | **64,402** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Սահմանափակ օգտագործման ֆոնդեր | 8 | 39,351 | – |
| Կրեդիտորական պարտքեր և պահուստներ | 9 | 1,137 | 2,179 |
| Պարտավորություններ շահութահարկի գծով | | 176 | 410 |
| | | **40,664** | **2,589** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **40,664** | **2,589** |
| **Կապիտալ** | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ | | – | 45,409 |
| Չբաշխված շահույթ | | 5,287 | 16,404 |
| **Ընդամենը կապիտալ** | | **5,287** | **61,813** |
| **Ընդամենը կապիտալ և պարտավորություններ** | | **45,951** | **64,402** |

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից և ստորագրվել՝

Գլխավոր տնօրեն՝ Արմեն Թավադյան

ՀԻՄՆԱԴՐԱՄ
ФОНД
FUNDATION
02680874

Գլխավոր հաշվապահ՝ Աննա Սահակյան

31 հուլիսի, 2023թ.

*Կից ներկայացված 1-ից 17 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:*

## Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծան. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| Եկամուտներ ստացված նվիրաբերություններից | 10 | 119,794 | 33,045 |
| Եկամուտներ մատուցված ծառայություններից | | – | 395 |
| **Ընդամենը եկամուտ** | | **119,794** | **33,440** |
| Տրված նվիրաբերություններ | 11 | (96,785) | (43,765) |
| Վարչական և այլ ծախսեր | 12 | (32,937) | (27,935) |
| **Ընդամենը ծախսեր** | | **(129,722)** | **(71,700)** |
| **Գործառնական վնաս** | | **(9,928)** | **(38,260)** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ | | (1,990) | (353) |
| Տոկոսային եկամուտ | | 977 | 2,288 |
| **Վնաս մինչև հարկումը** | | **(10,941)** | **(36,325)** |
| Շահութահարկի գծով ծախս | 13 | (176) | (410) |
| **Հաշվետու տարվա վնաս** | | **(11,117)** | **(36,735)** |
| *Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ* | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | 6 | – | 42,752 |
| Շահութահարկ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով | | – | 2,657 |
| **Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ** | | – | **45,409** |
| **Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո** | | – | **45,409** |
| **Ընդամենը հաշվետու տարվա այլ համապարփակ (վնաս)/եկամուտ** | | **(11,117)** | **8,674** |

*Կից ներկայացված 1-ից 17 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:*

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

## 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | *Հիմնական միջոցների վերագնահա-տումից աճ* | *Չբաշխված շահույթ* | *Ընդամենը կապիտալ* |
|---|---|---|---|
| **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **53,139** | **53,139** |
| Ընդամենը հաշվետու տարվա վնաս | – | (36,735) | **(36,735)** |
| Այլ համապարփակ եկամուտ | 45,409 | – | **45,409** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **45,409** | **16,404** | **61,813** |
| Ընդամենը հաշվետու տարվա վնաս | – | (11,117) | **(11,117)** |
| Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի հակադարձում | (45,409) | – | **(45,409)** |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **–** | **5,287** | **5,287** |

*Կից ներկայացված 1-ից 17 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:*

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

## 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*(հազար ՀՀ դրամ)*

| | Ծան. | 2022թ. | 2021թ. |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| Եկամտային ֆոնդերի համալրում նվիրաբերություններից | 10 | 157,549 | 32,335 |
| Մուտքեր մատուցված ծառայություններից | | 100 | 378 |
| Տրված նվիրաբերություններ | 11 | (96,785) | (43,765) |
| Աշխատակիցներին և մատակարարներին վճարված գումարներ | | (29,480) | (27,765) |
| Վճարված հարկեր՝ բացի շահութահարկից | | (4,006) | (3,443) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից/ (օգտագործված) գործառնական գործունեությունում մինչև շահութահարկ** | | **27,378** | **(42,260)** |
| Վճարված շահութահարկ | | (410) | (703) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից/ (օգտագործված) գործառնական գործունեությունում** | | **26,968** | **(42,963)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | | **–** | (1,491) |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում** | | **–** | **(1,491)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | | |
| Տոկոսային եկամուտ | | 977 | 2,288 |
| Տրամադրված վարկեր և փոխառություններ | | **–** | 145 |
| Ավանդադրված միջոցներ | | **–** | 45,764 |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված ֆինանսավորման գործունեությունից** | | **977** | **48,197** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (1,979) | (1,752) |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | | **25,966** | **1,991** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում | | **14,134** | **12,143** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում** | 7 | **40,100** | **14,134** |

*Կից ներկայացված 1-ից 17 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս:*

*(հազար ՀՀ դրամ)*

## 1. Գործունեության նկարագրություն

«Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աջակցման հիմնադրամ»-ը (այսուհետ՝ – «Հիմնադրամ») հիմնադրվել է 2018թ. հուլիսի 26-ին՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Հիմնադրամը ստեղծվել է՝ նպաստելու Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գործունեության զարգացմանը, պահպանմանը և բարձրացնելու հանրային իրազեկությունը Հայաստանում, Արցախում և նրա սահմաններից դուրս:

Հիմնադրամի հիմնադիրներն են Սերգեյ Սմբատյանը և Աննա Տեր-Հովակիմյանը:

Հիմնադրամը գտնվում է ՀՀ, ք. Երևան, 0001, Մարկ Գրիգորյան 2 հասցեում:

Հոգաբարձուների Խորհուրդը բաղկացած է 4 անդամից: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ունեցել է 4 աշխատող(2021: 4 աշխատող) :

Հիմնադրամի հիմնական նպատակները հետևյալն են՝

- Նպաստել հայ մշակույթի, երաժշտության, գիտության և կրթության զարգացմանը Հայաստանում և նրա սահմաններից դուրս:
- Նյութական օժանդակությամբ նպաստել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի՝ միջազգային տարբեր երաժշտական փառատոներին, միջոցառումներին, երաժշտական ծրագրերին մասնակցության ապահովմանը:
- Նպաստել Հայաստանի և սփյուռքի հայ մշակութային և կրթական կազմակերպությունների և անհատների միջև կապերի հաստատմանը և համագործակցությանը, հայ մշակույթի ներուժի համախմբմանը:

## 2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն («ՖՀՄՍ»):

Հիմնադրամը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով («ՀՀ դրամ»), և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

Հիմնադրամը նախորդ ժամանակատվածի համար չի ներկայացրել ֆինանսական հաշվետվություններ, և սույն ֆինանսական հաշվետվությունները հանդիսանում են Հիմնադրամի՝ ՖՀՄՍ-ներին համաձայն պատրաստված առաջին ֆինանսական հաշվետվությունները:

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

### ա) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

### Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ավանդադրված միջոցները դասակարգվում են որպես կարճաժամկետ,եթե նրանց մարման ժամկետը հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև 90 օր է:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

### ա) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

### Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման կորստի գծով պահուստը: Կանխավճարը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ, երբ դրա հետ կապված ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում են ձեռք բերվել մեկ տարուց հետո, կամ երբ այն վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման պահին կդասակարգվեր որպես ոչ ընթացիկ:

Ակտիվների ձեռքբերման համար տրված կանխավճարները տեղափոխվում են ակտիվի հաշվեկշռային արժեք, երբ Հիմնադրամը ակտիվի նկատմամաբ ձեռք է բերում վերահսկողություն, և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ: Այլ կանխավճարները ծախսագրվում են ֆինանսական արդյունքներում, երբ ստացվում են դրանց հետ կապված ապրանքներն ու ծառայությունները: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվները, ապրանքներն ու ծառայությունները չեն ստացվելու, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համարժեք կերպով նվազեցվում է, և համապատասխան արժեզրկումից կորուստը ճանաչվում է տվյալ տարվա ֆինանսական արդյունքներում:

### Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներն արտացոլվում են սկզբնական արժեքով՝ առանց ընթացիկ սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածություն ու արժեզրկումից կուտակված կորուստները: Արժեքը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ համգամանքների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են ակտիվի հաշվեկշռային արժեքի հնարավոր չվերականգնման վերաբերյալ:

Երաժշտական գործիքները արտացոլվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կազմում, եթե այն տվյալ ակտիվի արժեքի նախորդ նվազման վերականգնում չէ, որը նախկինում արտացոլվել էր ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այս դեպքում ակտիվի արժեքի աճը վերագրվում է ֆինանսական արդյունքներին: Վերագնահատումից արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ նախկինում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում արտացոլված նույն ակտիվի գծով արժեքի աճի հաշվին այդպիսի նվազեցման անմիջական հաշվանցմանը:

Ակտիվի օտարման դեպքում վերագնահատման պահուստում ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար դառնում է հասանելի: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով՝ ակտիվի ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

| ***Հոդված*** | ***Օգտակար ծառայության ժամկետ*** |
|---|---|
| Մեքենաներ և սարքավորումներ | 5 տարի |
| Գրասենյակային գույք | 5 տարի |
| Երաժշտական գործիքներ | 8 տարի |

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները անհրաժեշտության դեպքում վերանայվում և փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Վերանորոգումների և սպասարկման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերում, բացառությամբ, եթե դրանք բավարարում են կապիտալացման չափանիշներին:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

### ա) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

### Հիմնական միջոցներ (շարունակություն)

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ այն օտարվում է կամ ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում վերջինիս օգտագործումից կամ օտարումից: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը (որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն) պետք է ներառվի շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ միավորն ապաճանաչվում է:

### Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Հիմնադրամն ունի այնպիսի ֆինանսական ակտիվներ, ինչպիսիք են դրամական միջոցներն ու դրանց համարժեքները և ավանդադրված միջոցներ, որոնք հանդիսանում են իր գործունեության անմիջական արդյունքը:

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման պայմանավորվածության համաձայն, ինչպես նաև,
- Հիմնադրամը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Այն դեպքում, երբ Հիմնադրամը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Հիմնադրամի շարունակվող մասնակցությանը համարժեք: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Հիմնադրամից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ պարտքային գործիքները սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Դասակարգումը հիմնված է հետևյալ երկու չափանիշների վրա. Հիմնադրամի ակտիվների կառավարման բիզնես մոդելի և արդյոք գործիքի գծով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բավարարում են «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Հիմնադրամից ճանաչել ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստ բոլոր այն պարտքային գործիքների համար, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով:

Հիմնադրամը բանկերում բացված հաշիվների և ավանդների համար պահուստի գումարը հաշվարկում է՝ ելնելով գործընկեր բանկի երկարաժամկետ վարկային ռեյտինգից:

### Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, և չեն դասակարգվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հիմնադրամի հիմնական ֆինանսական պարտավորությունները բաղկացած են կրեդիտորական պարտքերից:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

### ա) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

### Եկամուտներ

Եկամտի սահմանափակ օգտագործման ֆոնդերը ստացվում են հատուկ նպատակով նվիրաբերություններից և հասանելի չեն Հիմնադրամի ընդհանուր օգտագործման համար: Այս ֆոնդերը սկզբնապես ձևակերպվում են որպես պարտավորություններ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես եկամուտ այնքան ժամանակ, որքան Հիմնադրամը կատարում է սահմանափակ օգտագործման ֆոնդերի գծով նվիրաբերությունների պայմանագրերով նախատեսված պարտավորությունները: Որպես կանոն՝ նման նվիրաբերություններից եկամուտները ճանաչվում են պարտավորությունները կատարելիս դրանց հետ կապված ծախսերի առաջացմանը զուգընթաց: Եկամտի սահմանափակ օգտագործման ֆոնդի տեսակ է սեփական օգտագործման ֆոնդը, որը տրամադրվում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով՝ Հիմնադրամի գործունեության մեջ օգտագործվելու համար: Սեփական օգտագործման ֆոնդի գծով նվիրաբերությունները սկզբից ձևակերպվում են որպես պարտավորություններ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես եկամուտ համապատասխան ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսի չափով: Եկամտի անսահմանափակ օգտագործման ֆոնդերը հասանելի են նվիրաբերությունների ընդհանուր նպատակների համար, ինչպես նշված է Հիմնադրամի կառավարչական փաստաթղթերում: Այդ իսկ պատճառով, եկամտի անսահմանափակ օգտագործման ֆոնդերի գծով նվիրաբերությունները ճանաչվում են որպես եկամուտ, երբ կան բավարար ապացույցներ, որ ստացվել և կատարվել է նվիրաբերությունը կատարելու խոստումը:

### Հասույթի ճանաչում

Հասույթը ճանաչվում է այնպես, որ նկարագրի ապրանքների և ծառայությունների՝ հաճախորդներին փոխանցման ձևը: Ճանաչված գումարը պետք է արտացոլի Հիմնադրամի կողմից ակնկալվող այն գումարը, որ կստանա այդ ապրանքների և ծառայությունների փոխանցման դեպքում:

Որպեսզի բավարարվի հասույթի ճանաչման հիմնական սկզբունքը, Հիմնադրամը կիրառում է հետևյալ հինգ քայլերի մոդելը՝

- Հաճախորդի հետ կնքված պայմանագրի որոշակիացում:
- Պայմանագրով սահմանված կատարման պարտականությունների որոշակիացում: Կատարման պարտականությունները պայմանագրով սահմանված խոստումներ են՝ հաճախորդին փոխանցելու տարբերակելի ապրանքներն ու ծառայությունները:
- Գործարքի գնի սահմանում: Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Հիմնադրամն ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, հաճախորդներին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցման դիմաց: Եթե պայմանագրով խոստացված գումարը պարունակում է փոփոխուն գումար, ապա Հիմնադրամը պետք է գնահատի այն հատուցման գումարը, որը վերջինս իրավունք կունենա ստանալ, որպես փոխանակում, հաճախորդներին խոստացված ապրանքների ու ծառայությունների փոխանցման դիմաց:
- Գործարքի գնի վերագրում յուրաքանչյուր կատարման պարտականությանը՝ հիմք ընդունելով պայմանագրով խոստացված յուրաքանչյուր տարբերակելի ապրանքի կամ ծառայության մասով առանձին վերցված հարաբերական վաճառքի գինը:
- Հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ կատարման պարտականությունը բավարարված է՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ երբ հաճախորդը ձեռք է բերում այդ ապրանքի կամ ծառայության վերահսկողությունը): Կատարման պարտականությունը կարող է բավարարվել ժամանակի կոնկրետ պահին (որպես կանոն հաճախորդին ապրանքների փոխանցման խոստումների դեպքում) կամ ժամանակի ընթացքում (որպես կանոն հաճախորդին ծառայությունների փոխանցման խոստումների համար): Ժամանակի ընթացքում բավարարված կատարման պարտականության համար, Հիմնադրամն ընտրում է առաջընթացի չափման համապատասխան միջոց սահմանելու համար, թե որքան հասույթ պետք է ճանաչվի, երբ կատարման պարտականությունը բավարարված է:

### Կապիտալ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի կապիտալը ներկայացում է իր զուտ ակտիվները: Հիմնադրամի զուտ ակտիվները չեն բաշխվում հիմնադիրների միջև ո՛չ սովորական գործունեության ընթացքում, և ոչ էլ՝ լուծարման ժամանակ:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

### ա) Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

### Տոկոսային եկամուտ

Եկամուտները ճանաչվում են այն ժամանակ, երբ տոկոսները հաշվեգրվում են օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, որն ակնկալվող ապագա դրամական մուտքերը զեղչում է ֆինանսական գործիքի ակնկալվող օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ֆինանսական ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքին:

### Ծախսեր

Վճարները, միջնորդավճարները և այլ ծախսերը սովորաբար ճանաչվում են հաշվեգրման եղանակով, երբ ծառայությունը համարվում է մատուցված:

### Աշխատակիցների հատուցումներ

Աշխատավարձերը, ՀՀ Պետական բյուջե հատկացումները, վճարովի տարեկան արձակուրդը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդը, պարգևավճարները և այլ ոչ դրամական հատուցումները (ինչպիսիք են, օրինակ, առողջապահական ծառայությունները) հաշվեգրվում են Հիմնադրամի աշխատակիցների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման տարում: Աշխատակիցները ստանում են կենսաթոշակներ ՀՀ Պետական կենսաթոշակային հիմնադրամից՝ օրենքներին և կարգավորումներին համապատասխան: ՀՀ Պետական կենսաթոշակային հիմնադրամին հատկացումները կատարվում են Հիմնադրամի կողմից տվյալ տարվա ընթացքում ուժի մեջ գտնվող պարտադիր դրույքաչափերին համապատասխան: Այսպիսի հատկացումները ծախսագրվում են, երբ կատարվում են:

### Արտարժութային գործառնություններ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայկական դրամով, որը Հիմնադրամի գործառնական և ներկայացման արժույթն է: Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են գործարքի կատարման ամսաթվի դրությամբ առկա գործառնական արժույթի փոխարժեքով: Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործառնական արժույթի փոխանակման փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով, արտարժույթով վերահաշվարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները:

Արտարժույթով գործարքների պայմանագրային փոխարժեքի և գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքի տարբերությունները արտացոլվում են արտարժութային գործառնություններից առաջացած օգուտ կամ վնասում:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 393.57 ՀՀ դրամ (2021թ.՝ 480.14 ՀՀ դրամ), իսկ 1 եվրոյի համար՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ.՝ 542.61 ՀՀ դրամ):

### Հարկեր

***Ընթացիկ տարվա շահութահարկ***

Ընթացիկ ժամանակաշրջանի համար շահութահարկի գծով ակտիվներն ու պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է հետ ստանալ հարկային մարմիններից կամ վճարել հարկային մարմիններին: Գումարը հաշվելու համար օգտագործվում են այն հարկային դրույքաչափերը և հարկային օրենսդրությունը, որոնք գործել են կամ, ըստ էության, գործել են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ:

*(հազար ՀՀ դրամ)*

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

### բ) Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

*Հիմնական միջոցներ – մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ*

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում, որն անհրաժեշտ է ղեկավարության կողմից նախանշված նպատակով այն գործարկելու համար, արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում:

Անցումային դրույթների համաձայն՝ Հիմնադրամը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

*ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ - Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ*

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի, կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխություն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում» ստանդարտի համար:

Անցումային դրույթների համաձայն՝ Հիմնադրամը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (սկզբնական կիրառման ամսաթիվ): Այս փոփոխությունները Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Հիմնադրամի ֆինանսական գործիքներում փոփոխություններ չեն կատարվել:

*Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՄՍ 37-ում փոփոխություններ*

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնց մասով Խումբը չի կարող խուսափել, քանի որ պայմանագիրն առկա է) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները: Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս կողմից:

Այս փոփոխությունները որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի վրա:

## 4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Թողարկված, բայց մինչև Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթիվն ուժի մեջ չմտած ստանդարտները և մեկնաբանությունները ներկայացված են ստորև: Հիմնադրամը նախատեսում է այդ ստանդարտները կիրառել (եթե դրանք կիրառելի են Հիմնադրամի համար) այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն:

*(հազար ՀՀ դրամ)*

## 4. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում*

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է:

Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի վրա:

*Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում*

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները ՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Հիմնադրամը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը՝ որոշելու, թե ինչ ազդեցություն կունենան դրանք Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա:

*Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*

2021 թվականի մայիսին Խորհուրդը հրապարակել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք նեղացնում են ՀՀՄՍ 12-ի համաձայն սկզբնական ճանաչման բացառությունների շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների:

Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Հիմնադրամը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունը:

*(հազար ՀՀ դրամ)*

## 5. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

### Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

Հիմնադրամի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է գնահատումներ և դատողություններ՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալների որոշման համար: Առավել էական ազդեցություն ունեցող գնահատումները և դատողությունները հետևյալն են.

***Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ***

Հիմնադրամը գնահատում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետներն առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին: Եթե սպասելիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, փոփոխությունները հաշվառվում են որպես փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում՝ համաձայն ՀՀՄՍ 8՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* ստանդարտի: Այս գնահատումները կարող են ունենալ նշանակալի ազդեցություն հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքների վրա:

***Հիմնական միջոցների ապաճանաչում***

2021 թվականին ձեռք բերված երաժշտական գործիքները սկզբնապես ճանաչվել են որպես իրական արժեքով չափվող ակտիվներ և հետագայում հաշվառվել են վերագնահատման մոդելի կիրառմամբ: Հիմնադրամը կարծում է, որ այդ գործիքները համապատասխանում են որպես ակտիվներ ճանաչելու չափանիշներին՝ անկախ այլ անձանց կողմից ժամանակավոր օգտագործելու հանգամանքից, քանի որ Հիմնադրամն իրավունք ունի հետ պահանջել այդ գործիքները և կրել լրացուցիչ ապահովագրական ծախսեր՝ այդ ակտիվները ապահովագրելու համար:

2022 թվականին այդ գործիքները մշտական հիմունքներով Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտներին փոխանցելու որոշում կայացնելուց հետո՝ առանց դրանք հետ պահանջելու մտադրության, այդ ակտիվները ապաճանաչվել են:

*(հազար ՀՀ դրամ)*

## 6. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները և դրանց գծով կուտակված մաշվածությունը բաղկացած են հետևյալ հոդվածներից.

| | *Մեքենաներ և սարքավորումներ* | *Գրասենյակային գույք* | *Երաժշտական գործիքներ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | | |
| **Մնացորդ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ** | **2,186** | **119** | **–** | **2,305** |
| Ավելացումներ | 797 | – | 2,733 | **3,530** |
| Վերագնահատման ազդեցությունը այլ համապարփակ արդյունքի վրա | – | – | 42,752 | **42,752** |
| **Մնացորդ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2,983** | **119** | **45,485** | **48,587** |
| Ավելացումներ | – | – | 784 | **784** |
| Օտարում և դուրսգրում | – | – | (42,752) | **(42,752)** |
| **Մնացորդ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2,983** | **119** | **3,517** | **6,619** |
| **Կուտակված մաշվածություն** | | | | |
| **Մնացորդ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ** | **1,805** | **26** | **–** | **1,831** |
| Մաշվածության գծով ծախս | 120 | 24 | 10 | 154 |
| **Մնացորդ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,925** | **50** | **10** | **1,985** |
| Մաշվածության գծով ծախս | 746 | 24 | 392 | 1,162 |
| **Մնացորդ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **2,671** | **74** | **402** | **3,147** |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | |
| **Մնացորդ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **1,058** | **69** | **45,475** | **46,602** |
| **Մնացորդ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **312** | **45** | **3,115** | **3,472** |

## 7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *Արժույթ* | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|---|
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | ՀՀ դրամ | 15,479 | 13,411 |
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | ԱՄՆ դոլար | 14,999 | 12 |
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | Եվրո | 9,622 | 711 |
| **Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | | **40,100** | **14,134** |

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դրամական միջոցները տեղաբաշխված են մեկ հայկական բանկում (2021թ.՝ մեկ հայկական բանկում): Բանկը չունի հրապարակված վարկանիշ: Դրամական միջոցների և դրանց համարժեքների բոլոր մնացորդները տեղակայված են Փուլ 1-ում:

## 8. Սահմանափակ օգտագործման ֆոնդեր

Սահմանափակ օգտագործման ֆոնդերը ստացվում են հատուկ նպատակով նվիրաբերություններից և մատչելի չեն Հիմնադրամի ընդհանուր օգտագործման համար: 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանափակ օգտագործման ֆոնդերի մնացորդը, որն ապագայում կօգտագործվի նախապես որոշված նպատակներով, կազմում է 39,351 հազար ՀՀ դրամ (2021թ՝ զրո):

Անսահմանափակ օգտագործման ֆոնդերը հասանելի են նվիրաբերությունների ընդհանուր նպատակների համար, ինչպես նշված է Հիմնադրամի կառավարչական փաստաթղթերում: Անսահմանափակ օգտագործման ֆոնդերի գծով Հիմնադրամը պարտավորություն չի ձևավորել և այդ ֆոնդերի գծով ստացված նվիրաբերությունները ճանաչել է եկամուտ՝ Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ծան. 10):

*(հազար ՀՀ դրամ)*

## 9. Կրեդիտորական պարտքեր և պահուստներ

Կրեդիտորական պարտքերը և պահուստները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|
| Եկամտային հարկ և այլ պարտադիր վճարներ | 538 | 293 |
| Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում | 333 | 1,628 |
| Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ | 266 | 258 |
| **Ընդամենը կրեդիտորական պարտքեր և պահուստներ** | **1,137** | **2,179** |

Ստորև ներկայացված է չօգտագործված արձակուրդի գծով պահուստի շարժը.

| | *Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ* |
|---|---|
| **Մնացորդ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ** | **449** |
| Տարվա ընթացքում կուտակված | 883 |
| Տարվա ընթացքում մարված | (1,074) |
| **Մնացորդ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **258** |
| Տարվա ընթացքում կուտակված | 1,014 |
| Տարվա ընթացքում մարված | (1,006) |
| **Մնացորդ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **266** |

## 10. Նվիրաբերություններից ստացված միջոցներ

Նվիրաբերություններից ստացված միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|
| Տեղական կազմակերպություններ | 131,757 | 21,696 |
| Անհատներ | 26,097 | 11,349 |
| **Ընդամենը եկամուտներ ստացված նվիրաբերություններից** | **157,854** | **33,045** |

2022թ. համար Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված 119,794 հազար ՀՀ դրամի (2021թ .՝ 33,045 հազար ՀՀ դրամ) ստացված նվիրաբերություններից եկամուտները ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանում նվիրաբերություններից ծախսված միջոցները: Ստացված նվիրաբերություններից եկամուտները բաղկացած են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հատուկ նպատակներով ծախսված 106,874 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 32,045 ՀՀ դրամ) սահմանափակ օգտագործման ֆոնդերից, ընդհանուր նպատակներով ծախսված 12,920 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 1,000 հազար ՀՀ դրամ) անսահմանափակ օգտագործման ֆոնդերից:

## 11. Տրված նվիրաբերություններ

Տրված նվիրաբերությունները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|
| Անհատներին տրված նվիրաբերություններ | 79,461 | 31,585 |
| Կազմակերպություններին տրված նվիրաբերություններ | 17,324 | 12,180 |
| **Ընդամենը տրված նվիրաբերություններ** | **96,785** | **43,765** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 12. Վարչական և այլ ծախսեր

Վարչական և այլ ծախսերը ընդգրկում են Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ծախսերը և Հիմնադրամի կողմից Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի (այսուհետ՝ – «ՀՊՍՆ») կատարած ծախսերի փոխհատուցումները:

Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ծախսերը ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|
| Անձնակազմի գծով ծախսեր | 15,106 | 11,913 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 3,081 | 6,126 |
| Մասնագիտական ծառայություններ | 2,400 | 840 |
| Մաշվածություն | 1,162 | 154 |
| Բանկի և ապահովագրության գծով ծախսեր | 101 | 454 |
| Այլ ծախսեր | 7 | 20 |
| **Ընդամենը վարչական և այլ ծախսեր** | **21,857** | **19,507** |

Հիմնադրամի կողմից Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարած ծախսերի փոխհատուցումները ներառում են հետևյալ հոդվածները.

| | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 6,616 | 3,734 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 2,756 | 3,059 |
| Այլ ծախսեր | 1,708 | 1,635 |
| **Ընդամենը վարչական և այլ ծախսեր** | **11,080** | **8,428** |

## 13. Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

| | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|
| **Ընթացիկ տարվա շահութահարկ** | | |
| Ընթացիկ տարվա շահութահարկի գծով ծախս | 176 | 410 |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **176** | **410** |

| | *2022թ.* | *2021թ.* |
|---|---|---|
| **Հաշվապահական վնաս մինչև հարկումը** | **(10,941)** | **(36,325)** |
| **Շահութահարկի փոխհատուցում՝ 18% կիրառելի հարկային դրույքով (2021թ՝ 18%)** | **(1,969)** | **(6,539)** |
| Չնվազեցվող ծախսեր | 1,787 | 6,885 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ | 358 | 64 |
| **Ընդամենը շահութահարկի գծով ծախս** | **176** | **410** |

*(հազար ՀՀ դրամ)*

## 13. Շահութահարկի գծով ծախս (շարունակություն)

| | *1 հունվարի 2022թ.* | *Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում Այլ համապարփակ եկամուտում* | *31 դեկտեմբերի 2022թ.* |
|---|---|---|---|
| **Հետաձգված հարկային ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 2,657 | (2,657) | – |
| **Զուտ հետաձգված հարկային ակտիվներ** | **2,657** | **(2,657)** | **–** |

## 14. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ

**Հիմնադրամի գործառնական միջավայրը**

*Իրավական միջավայր*

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամը դատական գործընթացների կամ վեճերի մեջ չի ներգրավվել: 2022 և 2021 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դեմ առկա դատական հայցեր չկան:

## 15. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հիմնադրամի հիմնադիրները բացահայտված են Ծանոթագրություն 1-ում: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը տիրապետում է կապակցված կողմերի հետ գործարքների որոշման և պատշաճ կերպով բացահայտման համապատասխան գործընթացների:

Հիմնադրամը կապակցված կողմերի հետ կատարում է այնպիսի գործարքներ, որոնք համարժեք են անկախ կողմերի հետ գործարքներին:

Ստորև ներկայացված են 2022թ. և 2021թ. համար կապակցված կողմերի հետ գործարքների ծավալը, եկամուտներն ու ծախսերը.

| | *2022թ.* |
|---|---|
| | *Կառավարչական առանցքային անձնակազմ* |
| **Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** | |
| Անձնակազմի գծով ծախսեր | 9,042 |
| **Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն** | |
| Տրամադրված վարկեր և փոխառություններ | – |
| Աշխատակիցներին և մատակարարներին վճարված գումարներ | 9,042 |

| | *2021թ.* |
|---|---|
| | *Կառավարչական առանցքային անձնակազմ* |
| **Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** | |
| Անձնակազմի գծով ծախսեր | 8,271 |
| **Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն** | |
| Տրամադրված վարկեր և փոխառություններ | 145 |
| Աշխատակիցներին և մատակարարներին վճարված գումարներ | 8,271 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 16. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների՝ հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքները մոտավորապես համասար են դրանց հաշվեկշռային արժեքներին՝ պայմանավորված իրենց կարճ ժամկետայնությամբ:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրական արժեքով.

| | ***Ընդամենը*** | ***Մակարդակ 1*** | ***Մակարդակ 3*** |
|---|---|---|---|
| ***2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*** | | | |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 40,100 | 40,100 | – |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 599 | – | 599 |

| | ***Ընդամենը*** | ***Մակարդակ 1*** | ***Մակարդակ 3*** |
|---|---|---|---|
| ***2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*** | | | |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 14,134 | 14,134 | – |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 1,886 | – | 1,886 |

*(հազար ՀՀ դրամ)*

## 17. Ռիսկի կառավարում

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները կազմված են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերից: Այս ֆինանսական գործիքների հիմնական նպատակը Հիմնադրամի բարեգործական գործունեությունում կիրառումն է:

Հիմնական ռիսկերը, կապված Հիմնադրամի ֆինանսական գործիքների հետ, հանդիսանում են տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի փոխարժեքի տատանման ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

### Տոկոսադրույքի ռիսկ

Հիմնադրամի եկամուտները և գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը անկախ են շուկայական տոկոսադրույքի փոփոխություններից:

### Արժութային ռիսկ

Հիմնադրամը ստանում է արտարժույթով արտահայտված զգալի նվիրաբերություններ իր նվիրատուներից և, հետևաբար, այս տեսանկյունից ենթակա է արտարժութային ռիսկի: 2022թ.-ի հունվարի 1-ից մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Հիմնադրամն իրականացրել է զգալի արժութային գործարքներ՝ ծառայությունների և ապրանքների գծով վճարումների հետ կապված:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Հիմնադրամի եկամտի զգայունությունը փոխարժեքների հնարավոր ողջամիտ տատանումների նկատմամբ՝ ենթադրելով, որ բոլոր այլ փոփոխականները մնում են հաստատուն (պայմանավորված դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխությունների հետ):

| | ***Փոխարժեքի փոփոխություն (%)*** | ***Եկամտի վրա ազդեցություն*** |
|---|---|---|
| **2022թ.** | | |
| ԱՄՆ դոլար | 12.62 | 1,893 |
| Եվրո | 21.31 | 2,058 |
| ԱՄՆ դոլար | (12.62) | (1,893) |
| Եվրո | (21.31) | (2,058) |

| | ***Փոխարժեքի փոփոխություն (%)*** | ***Եկամտի վրա ազդեցություն*** |
|---|---|---|
| **2021թ.** | | |
| ԱՄՆ դոլար | 5 | 1 |
| Եվրո | 8.5 | 64 |
| ԱՄՆ դոլար | (5) | (1) |
| Եվրո | (8.5) | (64) |

Հիմնադրամը չունի որևէ համաձայնություն իր գործունեության ընթացքում արտարժութային ռիսկերը մեղմացնելու համար և ենթակա է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ռիսկին՝ բաց արժութային դիրքի չափով:

### Պարտքային ռիսկ

Հիմնադրամը համագործակցում է միայն ճանաչված և վճարունակ երրորդ կողմերի հետ: Հիմնադրամի՝ պարտքային ռիսկին հակվածության վրա ազդում է գործընկերոջ հնարավոր անվճարունակությունը, որի առավելագույն գումարը հավասար է համապատասխան ֆինանսական գործիքի հաշվեկշռային արժեքին:

### Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է շարունակական վերահսկողություն վնասներ կրելու ռիսկի ուղղությամբ, որն առաջանում է իրացվելի ակտիվների բացակայության պատճառով ֆինանսական պարտավորություններն ամբողջությամբ կատարելու անկարողությունից: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետը մեկ ամսից պակաս է:



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 02.08.2023 17:31